Հիմնադրվել է 1945 թվականին

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մտածիր Գործիր Նվաճիր

«Մտածի՛ր, գործի՛ր, նվաճի՛ր»

ՀՖԿՍՊԻ-ն իր բացառիկ տեղն ունի հայկական բարձրագույն կրթական համակարգում: Ստանալով բարձրագույն կրթություն **ՀՖԿՍՊԻ-ի** շրջանավարտները դառնում են ոլորտի առաջատար մասնագետներ:

Մեր ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը շուրջ 220 հոգի է, որից 4-ը՝ գիտությունների դոկտոր, 61-ը՝ գիտությունների թեկնածու, 12-ը՝ պրոֆեսոր, 53-ը՝ դոցենտ: Բուհում սովորում է շուրջ 2500 ուսանող:

Բուհում կրթական ծրագրերն իրականացվում են Մարզչամանկավարժական և Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետներում:

ՀՖԿՍՊԻ-ում իրականացվում է եռաստիճան կրթություն, բուհում գործում է.

Բակալավրի 4 կրթական ծրագիր (4 տարի տևողությամբ)

- **Մասնագիտական մանկավարժություն՝** Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
- **Մասնագիտական մանկավարժություն՝** Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա
- **Սպորտ՝** Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա
- **Լրագրություն՝** Լրագրություն:

Մագիստրատուրայի 9 կրթական ծրագիր (1-1,5 տարի տևողությամբ)

- **Մասնագիտական մանկավարժություն՝** Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա
- **Մասնագիտական մանկավարժություն՝** Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
- **Սպորտ՝** Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա,
- **Սպորտ՝** Ադապտիվ սպորտ
- **Լրագրություն՝** Լրագրություն
- **Հոգեբանություն՝** Հոգեբանություն

- **Կառավարում՝** Սպորտի մենեջմենտ
- **Կառավարում՝** սպորտի մարկետինգ
- **Զբոսաշրջություն՝** Սպորտային տուրիզմ:

Ասպիրանտուրա՝ հետբուհական 3 կրթական ծրագիր (3-5 տարի տևողությամբ)

- **Դասավանդման և ուսուցման մեթոդիկա**
- **Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն**
- **Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա:**

Բակալավրի կրթությունը ուսանողներին ապահովում է մասնագիտական մանկավարժության, ֆիզիկական դաստիարակության տեսության և սպորտային մարզումների, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, առողջարարական ֆիզիկական կուլտուրայի (կինեզիոլիոգիա) և լրագրության համար անհրաժեշտ գիտելիքներով:

Իր գործունեության շուրջ ութ տասնամյակների ընթացքում ՀՖԿՍՊԻ-ն ունեցել է նշանակալի ձեռքբերումներ՝ կրթության, գիտության, սպորտի և սպորտը սպասարկող ոլորտներում:

Մենք ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտների միջազգային ասոցիացիայի անդամ ենք, համագործակցում ենք ԱՊՀ և եվրոպական երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտների և համալսարանների, տեղական և միջազգային մարզական կազմակերպությունների և ֆեդերացիաների հետ:

ՀՖԿՍՊԻ-ում գործում է տարածաշրջանում եզակի «Սպորտ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնը:

Մենք հաստատուն քայլերով առաջ ենք ընթանում՝ կարևորելով ուսանողակենտրոն կրթությունը, գիտական հետազոտությունների արդիականացումը և իհարկե՝ կրթական ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին:

Մենք ստեղծում ենք առողջ աշխարհ, ձևավորում ենք ինտելեկտուալ անհատականություն:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ/ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ

Եկեք ՀՖԿՍՊԻ, ստացեք ժամանակակից մասնագիտություն, դարձեք պահանջված մասնագետ

Կինեզիոլոգիան վերականգնողական, կանխարգելիչ և առողջարարական բժշկություն է:

Ընդունվելով ՀՖԿՍՊԻ և ընտրելով ֆիզիկական թերապիստի մասնագիտությունը դուք հնարավորություն եք ունենում.

- ստանալ բարձրակարգ գիտելիքներ առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության և սպորտային գիտությունների բնագավառում
- աշխատել սպորտի, առողջապահական և կրթական ոլորտներում
- աշխատել հիվանդանոցներում, մասնավոր կլինիկաներում, պոլիկլինիկաներում, ֆիթնես ակումբներում
- ունենալ բարձր վարձատրվող աշխատանք
- աշխատել ստացիոնար և ամբուլատոր կլինիկական հաստատություններում, վերականգնողական, բուժական և կանխարգելիչ կենտրոններում:

Մեզ մոտ դասավանդում են ոլորտի լավագույն մասնագետները, որոնք աշխատում են նաև հանրապետության տարբեր բուժհաստատություններում, վերականգնողական և մարզաառողջարարական կենտրոններում:

Ընդունելության քննությունները՝
«Կենսաբանություն» առարկայի միասնական քննություն
«Մասնագիտություն» առարկայի ներբուհական քննություն

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

Եթե ցանկանում եք լինել ֆիզիկապես առողջ և համակողմանի զարգացած

Եթե ցանկանում եք դաստիարակել հայրենիքին պիտանի անհատներ, լինել բանիմաց և արհեստավարժ մարզիչ

Եկեք ՀՖԿՍՊԻ, դարձեք առաջնակարգ մանկավարժ և որակյալ մարզիչ:

Մեր շրջանավարտներն աշխատում են.

- նախադպրոցական ուսումնական հաստատություններում
- հանրակրթական ուսումնական հաստատություններում (հիմնական և ավագ դպրոցներ)
- մանկապատանեկան մարզադպրոցներում, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված քոլեջներում
- մարզամշակութային կենտրոններում, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներում
- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
- ուսումնագիտական լաբորատորիաներում, գիտամանկաավարժական և գիտակրթական կենտրոններում
- մարզական համալիրներում:

ՀՖԿՍՊԻ–ում իրականացվում է բակալավրի կրթական ծրագիր, որը հնարավորություն է տալիս ստանալ մանկավարժի որակավորում նաև նրանց, ովքեր չունեն մարզական մասնագիտություն:

Ընդունելության քննությունները՝

«Մասնագիտություն» առարկայի ներբուհական քննություն,

«Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայի ներբուհական քննություն

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանությունն ամենաարդիական և հետաքրքիր մասնագիտություններից է:

Մեր շրջանավարտները դառնում են մասնագետներ՝

- Ընդհանուր և սպորտի հոգեբանության
- Տարիքային և մանկավարժական հոգեբանության
- Ընդհանուր և սպորտի մանկավարժության ոլորտներում:

Մեզ հետ դուք կուսումնասիրեք՝

- Հոգեախտորոշում և սպորտի կիրառական հոգեբանություն, սպորտային պատրաստության հոգեբանական ապահովման հիմունքներ, սպորտային գործունեության հոգեհիգիենա, մարզիկի անձի և հոգեկանի զարգացումը սպորտում,
- Ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող անձանց հոգեկարգավորման մեթոդներ, հոգեբանական աջակցությունն ու հսկողությունը ադապտիվ սպորտում,
- Բարձրագույն կրթության մանկավարժություն և հոգեբանություն, Էթնոմանկավարժություն, 21-րդ դարի կրթության զարգացման հեռանկարներ, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ:

Ստանալով հոգեբանի մասնագիտություն դուք հնարավորություն կունենաք աշխատել մարզադպրոցներում, տարբեր մարզաձևերի հավաքական թիմերում, ֆիզիկական դաստիարակության ոլորտում:

Ընդունելությունը մագիստրատուրայում՝ հարցազրույցով:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ցանկանո՞ւմ ես լինել մարզական իրադարձությունների կենտրոնում, ձգտու՞մ ես դառնալ մարզական լրագրության առաջատար մասնագետ, ստեղծագործ ես, սիրո՞ւմ ես մեդիա աշխարհը՝ մենք սպասում ենք քեզ:

Արի՛ ՀՖԿՍՊԻ, դարձի՛ր մարզական լրագրող

Այստեղ դու սովորելու ես՝

- ստեղծել մուլտիմեդիա բովանդակություն՝ կիրառելով տարբեր գործիքներ
- լուսանկարել, տեսագրել և ձայնագրել՝ օգտագործելով մասնագիտական անհրաժեշտ սարքավորումներ և ժամանակակից ծրագրեր
- մեկնաբանել մարզական իրադարձություններ
- պատրաստել տարբեր ձևաչափերի մեդիա նյութեր /փոդքաստ, հոլովակ, հեղինակային հաղորդում և այլն/
- եթերային բանավոր և գրավոր խոսքի կուլտուրա
- պլանավորել մեդիա նախագծեր և կառավարել դրանք
- մտածել քննադատաբար և կատարել հետազոտական աշխատանք մեդիա ոլորտում:

Մեր շրջանավարտներն աշխատում են որպես՝

- մարզական լրագրող
- մարզական մեկնաբան
- մուլտիմեդիոն թղթակից
- ֆոտոլրագրող
- խմբագիր
- մեդիա նախագծերի կառավարող

Կարևոր է՝

Մենք համագործակցում ենք ՀՀ առաջատար լրատվամիջոցների, լրագրողական կազմակերպությունների հետ, ինչը հնարավորություն կտա ձեզ մասնագիտական պրակտիկա անցնել ՀՀ առաջատար լրատվամիջոցներում:

Ընդունելության քննությունները՝

«Հայոց լեզու» առարկայի միասնական քննություն,

«Օտար լեզու» առարկայի միասնական քննություն:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ցանկանում ե՞ք դառնալ սպորտի ոլորտի կառավարիչ, եկեք Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ:

Ստացեք ժամանակակից մասնագիտություն, դարձեք Հայաստանի Հանրապետության սպորտի լավագույն կառավարիչներից մեկը:

Մենք պատրաստում ենք աշխատաշուկայում պահանջարկ ունեցող որակյալ մասնագետներ, որոնք հնարավորություն ունեն աշխատել.

- Պետական կառավարման ոլորտում
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի ուղղվածությամբ ստորաբաժիններում
- Մարզաձևերի ազգային ֆեդերացիաներում
- Մարզակառույցների կառավարման համակարգում
- Պրոֆեսիոնալ սպորտային ակումբներում
- Մարզաառողջարարական կենտրոններում
- Սպորտային կազմակեպությունների մարքեթինգի, գովազդի և PR բաժիններում:

Ընդունելությունը մագիստրատուրայում՝ հարցազրույցով:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾ

Փրկարարն աշխարհի ամենամարդասիրական մասնագիտությունն է:

Փրկարարի մասնագիտությունը առաքելություն է, որն իր մեջ ամփոփում է ուժ և բարություն:

ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտներն աշխատում են.

- ՀՀ արտակարգ իրավիճակի նախարարությունում
- բուհերում
- նախադպրոցական ուսումնական հաստատություններ
- հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ հիմնական և ավագ դպրոցներում
- մանկապատանեկան մարզադպրոցներում, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված քոլեջներում
- մարզամշակույթային կենտրոններում, մարզական հասարակական կազմակերպություններում, ֆեդերացիաներում
- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
- ուսումնագիտական լաբորատորիաներում
- գիտամանկավարժական, գիտակրթական կենտրոններում
- արկածային համալիրներում, ջրային ատրակցիոներում և պարանային այգիներում:

Մեր ուսանողները պրակտիկա են անցնում

- ԱԻՆ հատուկ նշանակության փրկարարական ջոկատում
- Հայ–ռուսական հումանիտար փրկարարական կենտրոնում
- Հայաստանի ալպինիզմի և լեռնային տուրիզմի ֆեդերացիայում:

Ընդունելության քննությունները՝

«Մասնագիտություն» առարկայի ներբուհական քննություն,
«Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայի ներբուհական քննություն:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄ

Եթե ցանկանում եք դառնալ սպորտային տուրիզմի լավագույն մասնագետ, ապա եկեք ՀՖԿՍՊԻ, դարձեք Հայաստանի Հանրապետության սպորտային տուրիզմի կայացման և զարգացման մասնակիցը, եղեք մեր երկրում մարզաառողջարարական զբոսաշրջային միջոցառումների իրականացնող առաջատար մասնագետ:

Մեր շրջանավարտներն ունեն կայուն և լավ վարձատրվող աշխատանք և հնարավորություն աշխատելու՝

- հանգստյան տներում, գոտիներում, առողջարարական կազմակերպություններում,
- արտադրական ձեռնարկություններում
- մարզական հասարակական կազմակերպություններում
- արկածային տուրիզմի կենտրոններում և ակումբներում:

Մեզ մոտ ուսումնասիրում են.

- պատմամշակութային տուրիզմ
- հնարավոր արտակարգ իրավիճակները և փրկարարական աշխատանքները տուրիզմում
- ինովացիոն տուրիզմ
- սպորտային տուրիզմ
- էկոտուրիզմ
- տուրիզմ և սերվիս:

Ընդունելությունը մագիստրատուրայում՝ հարցազրույցով:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
Facebook/sportedu.am
@Asipcs_official
@Asipcs